ԱՆԿԱԽ ԱԶԳՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՄ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԻՑ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՍ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆ

17.10.2015 14:34

ՀՀ փաստաբանների պալատում կայացել է ՀՀ ՓՊ-ի և Փաստաբանների միջազգային միության (համագործակցության) Սիբիրյան դաշնային մասնաճյուղի նախագահ Սերգեյ Վլասովի գլխավորած պատվիրակության հետ հանդիպումը:

Հանդիպման ժամանակ Վլասովը նշել է. ‘**Ուրախությամբ պետք է նշենք, որ հայաստանյան փաստաբանական գործունեությունը մեծ թռիչք է կատարել և կշիռ ունի միջազգային հարթակում: Ցավոք այսօր մեծ խմբով չենք ներկայացել, քանի որ ԱՊՀ երկրների Փաստաբանական միությունը Սիբիրի շրջանում իր մասնաճյուղը միայն այս տարի է բացել, և հաջորդ հանդիպումը հնարավոր է ավելի մեծ կազմով լինի և ինչու չէ արդեն մեզ մոտ**’:

Նա հույս է հայտնել, որ հանդիպումն արդյունավետ կլինի՝ կարևորելով փորձի փոխանակումը, որին ի պատասխան ՀՀ ՓՊ նախագահ Արա Զոհրաբյանը ներկայացրել է Պալատի ձեռքբերումներն ու խնդիրները: ՓՊ նախագահը նշել է - ‘**Անկախ ազգությունից կամ քաղաքացիությունից փաստաբաններս առաջնահերթ կարևորում ենք անկախությունը: Պետական մարմինները միշտ փորձելու են ճնշել փաստաբաններին, հակառակ կողմը փորձելու է ազդել մեր վրա, որը քրեական գործերով ավելի տեսանելի է և այս իրավիճակից դուրս գալու միջոցները կամ մեթոդները կարող ենք միասին մշակել»:**

Քննարկմամբ պարզվեց, որ ի տարբերություն ՌԴ օրենսդրական կարգավորման Հայաստանում փաստաբանի անկախության երաշխիքներն առավել բարձր են: Օրինակ, փաստաբանության մասին օրենքով չի կարող հետախուզվել փաստաբանի բնակարանը կամ գրասենյակը՝ փաստաթղթեր կամ կրիչների առգրավման նպատակով: Որպես վկա չի կարող հարցաքննվել, ինչպես փաստաբանները, այնպես էլ փաստաբանական գրասենյակի աշխատակիցները, օրինակ հաշվապահը կամ ընդունարանի քարտուղարը:

Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանը ռուս գործընկերներին ներկայացրել է Հայաստանում Փաստաբանության զարգացման պատմությունը և զարգացման ուղիները: Սերգեյ Վլասովի խնդրանքով

Արթուր Հովհաննիսյանը ներկայացրել է այն հիմնահարցերը, որոնք այսօր առկա են փաստաբանության առջև: Նշվել է պետական կառույցների հետ աշխատանքում առկա դժվարությունները, փաստաբանների անկախության նկատմամբ ոտնձգությունները, քննարկվել են դրանց լուծման ուղիները:

Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը ներկայացրել է դպրոց ընդունվելու կարգը, ուսուցման պրոցեսը, ինչպես նաև որակավորման քննություններ հանձնելու կարգը: Դպրոցի տնօրենը հայտնել է, որ ուսումնական ծրագիրը կազմելիս օգտվել են ֆրանսիական Փաստաբանական դպրոցի ուսումնական ծրագրից և հարմարեցրել են հայկական օրենքներին:

Վերջինս հայտնել է, որ Դպրոցը գտնվում է հիմնադրամի կարգավիճակում, իսկ հիմնադիրը փաստաբաններն են և այն ղեկավարվում խորհրդի 6 անդամների կողմից, որոնցից մեկը պարտադիր լինում է Արդարադատության նախարարության ներկայացուցիչ (հիմնականում լինում է նախարարի տեղակալը):

Նշենք նաև, որ օրենքով հաստատված է այն, որ յուրաքանչյուր անձ, ով ցանկանում է դառնալ փաստաբան, պարտավոր է ավարտել Փաստաբանական դպրոցը և հանձնել որակավորման քննությունները, որից հետո ՓՊ խորհուրդը շնորհում է փաստաբանական գործունեության արտոնագիրը:



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })